ՎՎԲ

Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ) խումբ [KfW Bankengruppe]
Փոստային ինդեքս՝ 111141, 60046 Մայնի Ֆրանկֆուրտ

ՀՀ ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյան 1 փող.
0010 Երեւան,
Հայաստանի Հանրապետություն
Ֆաքս՝ +374 60 700 359

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (ԲԷՑ)
Զորավար Անդրանիկի 1 փող.
0080 Երեւան,
Հայաստանի Հանրապետություն
Ֆաքս՝ +374 720 121

ՎՎԲ զարգացման բանկ
Մարկ Գալլ
Մտից համար՝ GaM
Հեռ.՝ +49 69 7431-4745
marc.gall@kfw.de

Ամսաթիվ՝ 22 ապրիլի 2020 թվական

## Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց II

## Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ

## Վարկային համաձայնագիր Հայաստանի Հանրապետության եւ ՎՎԲ-ի միջեւ

## Մասհանումների ժամկետի երկարաձգում եւ հետվճարման փոփոխված ժամանակացույց

## Վարկային համաձայնագիր

| | |
|---|---|
| **Ամսաթիվ՝** | **9 դեկտեմբերի 2014 թվական** |
| **Գումարի չափը՝** | **75,000,000 (յոթանասունհինգ միլիոն) եվրո** |
| **BMZ-ID՝** | **2012 66 949** |
| **Վարկի համարը՝** | **26977** |

## (Վարկային համաձայնագիր)

Հարգելի՛ նախարար պարոն Ջանջուղազյան,

Հաշվի առնելով վերոնշյալ Վարկային համաձայնագիրը եւ ի պատասխան 2019 թվականի նոյեմբերի 22-ի Ձեր գրությանը՝ տեղեկացնում ենք Ձեզ, որ Վարկային համաձայնագրի 3.2 հոդվածով սահմանված կարգով մասհանումների պահանջ ներկայացնելու վերջնաժամկետը կարող է երկարաձգվել մինչեւ 2025 թվականի դեկտեմբերի 31-ը՝ պայմանով, որ Դուք մասամբ կրելու եք այդ երկարաձգման հետեւանքով ՎՎԲ-ի կրած վերաֆինանսավորման ծախսերը։

Վարկի մասհանման ժամկետի՝ մինչեւ 2025 թվականի դեկտեմբերի 31-ը երկարաձգման վերաֆինանսավորման ծախսերը (Վերջնական երկարաձգման վճար) հաշվարկվելու են ՎՎԲ-ի կողմից՝ կապիտալի շուկայի գործունեության՝ վերջնահաշվարկի օրվա դրությամբ գերակայող պայմանների հիման վրա։

Վերջնական երկարաձգման վճարի մի մասի մարման պարտականությունը կրում է Փոխառուն։ Այդ մասը կազմում է 740,000.00 (յոթ հարյուր քառասուն հազար) եվրո, եթե Փոխառուի եւ ՎՎԲ-ի միջեւ գրավոր համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ։

Խնդրում ենք Ձեզ մինչեւ հուլիսի 30-ն ընդունել սույն գրության պայմանները եւ այդպիսով հաստատել, որ Ձեր կողմից կատարվել են Վերջնական երկարաձգման վճարի վճարման՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված բոլոր նախապայմանները (բացի սույն գրության մեջ նշված պայմանների վավերացումից)։ Սույն գրությունն ամբողջությամբ վավերացնելու վերաբերյալ Ձեր գրավոր հաստատումն ստանալուց հետո՝ հինգ բանկային օրվա ընթացքում, Ձեզ կուղարկվի փոխանցում կատարելու համար նախատեսված հաշվի տվյալները։ Խնդրում ենք Ձեզ նկատի ունենալ, որ Վերջնական երկարաձգման վճարն այդպիսով դառնում է պարտադիր եւ վճարման ենթակա։

Եթե i) մինչեւ 2020 թվականի հուլիսի 30-ը ստացվում է սույն գրության պայմանների ընդունման վերաբերյալ Ձեր գրավոր հաստատումը, եւ ii) ոչ ուշ, քան մինչեւ նոյեմբերի 30-ը ստացվում է սույն գրությունը պատշաճ ձեւով

վավերացնելու վերաբերյալ Ձեր գրավոր հաստատումը, ինչպես նաեւ iii) եթե պատշաճ ձեւով ստացվում է Վերջանական երկարաձգման վճարը, ապա ՎՎԲ-ն համաձայնում է Համաձայնագրում կատարել ստորեւ նշված փոփոխությունները։

**Բաժին Ա. Մեկնաբանությունը**

Եթե սույն գրության մեջ առկա է հակառակի վերաբերյալ ուղղակի դրույթ, կամ եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ապա Վարկային համաձայնագրում մեծատառով սահմանված եզրույթները սույն գրության մեջ ունեն նույն իմաստը։

**Բաժին Բ. Վարկային համաձայնագրում կատարվող փոփոխությունը**

Վարկային համաձայնագրում կատարվում են հետեւյալ փոփոխությունները.

Հանել 3.2 հոդվածը եւ այն փոխարինել հետեւյալ խմբագրությամբ հոդվածով.

«ՎՎԲ-ն իրավունք ունի հրաժարվելու մասհանումներ կատարելուց 2025 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:»։

6.1 հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Փոխառուն մարում է Վարկը հետեւյալ կարգով.

| Մարման վերջնաժամկետը | Հետվճարի չափը |
|---|---|
| 2025 թվականի հունիսի 30 | 7,500,000.00 եվրո |
| 2025 թվականի դեկտեմբեր 30 | 7,500,000.00 եվրո |
| 2026 թվականի հունիսի 30 | 7,500,000.00 եվրո |
| 2026 թվականի դեկտեմբերի 30 | 7,500,000.00 եվրո |
| 2027 թվականի հունիսի 30 | 7,500,000.00 եվրո |
| 2027 թվականի դեկտեմբերի 30 | 7,500,000.00 եվրո |
| 2028 թվականի հունիսի 30 | 7,500,000.00 եվրո |
| 2028 թվականի դեկտեմբերի 30 | 7,500,000.00 եվրո |
| 2029 թվականի հունիսի 30 | 7,500,000.00 եվրո |
| 2029 թվականի դեկտեմբերի 30 | 7,500,000.00 եվրո»։ |

Հանել 13.10 հոդվածի (Ծրագրին առնչվող տեղեկատվության հրապարակումը) «ա» կետը եւ այն փոխարինել հետեւյալ բովանդակությամբ կետով.

*«Ծրագրին առնչվող տեղեկատվության հրապարակումը ՎՎԲ-ի կողմից.* Զարգացման համագործակցության ոլորտում առավելագույն թափանցիկության եւ արդյունավետության՝ միջազգայնորեն ընդունված սկզբունքների համաձայն՝ ՎՎԲ-ն հրապարակում է Ծրագրի եւ պայմանագրի կնքմանը նախորդող բանակցությունների ընթացքում դրա ֆինանսավորման վերաբերյալ ընտրված տեղեկատվությունը (ներառյալ բնապահպանական եւ սոցիալական դասակարգման եւ գնահատման արդյունքներն ու դրանցից հետո կատարված գնահատման հաշվետվությունները), մինչդեռ Ծրագրին առնչվող համաձայնագիրը (համաձայնագրերը) կատարվում է (են) նաեւ պայմանագրի կնքմանը հաջորդող փուլում (այսուհետ՝ **Ողջ ժամանակահատված**):

Տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվում է ՎՎԲ զարգացման բանկի ինտերնետային կայքում (http://transparenz.kfw-entwicklungsbank.de/en):

Ծրագրին եւ դրա ֆինանսավորմանն առնչվող տեղեկատվության հրապարակումը Տեղեկատվության հրապարակումը (ՎՎԲ-ի կամ երրորդ անձանց կողմից՝ ներքոհիշյալ 13.10 հոդվածի «գ» կետի համաձայն *(Ծրագրին առնչվող տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց եւ նրանց կողմից հրապարակումը)*) չի ներառում որեւէ պայմանագրային փաստաթուղթ կամ զգայուն ֆինանսական կամ բիզնես գործունեությանն առնչվող որեւէ մանրամասն տեղեկատվություն՝ Ծրագրում ներգրավված կողմերի կամ դրա ֆինանսավորման վերաբերյալ, ինչպես օրինակ՝

i) ներքին ֆինանսական տվյալների վերաբերյալ տեղեկատվություն,

ii) բիզնես ռազմավարություններ,

iii) ներքին կորպորատիվ ուղեցույցներ եւ հաշվետվություններ,

iv) ֆիզիկական անձանց անձնական տվյալներ,

v) կողմերի ֆինանսական վիճակի մասին ՎՎԲ-ի ներքին դասակարգում։»։

Հանել 10.5 հոդվածը *(Պարտավորությունների պահպանումը)* եւ այն փոխարինել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 10.5 հոդվածով.

«Փոխառուն պարտավորվում է մշտապես կատարել Հավելված 1ա-ով (Պարտավորությունների պահպանումը Փոխառուի կողմից) սահմանված պարտավորությունները։ Ծրագրի իրականացման գործակալությունը պարտավորվում է մշտապես կատարել Հավելված 1բ-ով (Պարտավորությունների պահպանումը Ծրագրի իրականացման գործակալության կողմից) սահմանված պարտավորությունները։»։

Սույն Լրացուցիչ վարկային համաձայնագրին կից հավելվածները կցվում են Սկզբնական վարկային համաձայնագրին որպես դրա նոր հավելվածներ եւ կազմում են դրա բաղկացուցիչ մասը։

**Բաժին Գ. Շարունակականությունը**

Վարկային համաձայնագրի մյուս բոլոր դրույթները եւ դրա փոփոխությունները մնում են անփոփոխ եւ շարունակում են ամբողջությամբ ուժի մեջ մնալ եւ գործել՝ բացառությամբ սույն գրությամբ նախատեսվող փոփոխությունների։

**Բաժին Դ. Լրացուցիչ դրույթներ**

1. Սույն գրությամբ չի փոփոխվում կամ ուժը կորցնում Վարկային համաձայնագրի կամ դրա փոփոխությունների որեւէ այլ դրույթ, եւ մասնավորապես այն չի համարվում Վարկային համաձայնագրով նախատեսված՝ մեր որեւէ իրավունքից հրաժարում՝ բացառությամբ, եթե սույն գրությամբ այլ բան սահմանված չէ։

2. Վարկային համաձայնագրի 9.3 հոդվածի *(Հարկերը եւ այլ գանձումներ),* 9.4 հոդվածի *(Ավելացված ծախսերը),* 13.3 հոդվածի *(Մասնակի անվավերությունը*

*եւ բացերը),* 13.4 հոդվածի *(Գրավոր ձեւը),* 13.6 հոդվածի *(Կիրառվող օրենքը),* 13.9 հոդվածի *(Իրավական վեճերը)* եւ 13.10 հոդվածի *(Ծրագրին առնչվող տեղեկատվության հրապարակումը)* «բ»-«դ» կետերի դրույթները ներառվում են սույն գրության մեջ՝ որպես սույն գրության մեջ ամբողջովին սահմանված, եւ այդ դրույթներում Վարկային համաձայնագրին արված հղումները համարվում են սույն գրությանն արված հղումներ։

3. Սույն գրությունը կազմվել է երեք բնօրինակից՝ անգլերեն։

Խնդրում ենք հաստատել Ձեր համաձայնությունը վերը նշված փոփոխություններին՝ ստորագրելով պարտադիր իրավական ուժ ունեցող ձեւով եւ վերադարձնելով բնօրինակը ՎՎԲ-ին։

Հարգանքով՝

ՎՎԲ

| | |
|---|---|
| *[ստորագրություն]* | *[ստորագրություն]* |
| Թոմաս Այզենբախ | Մարկ Գալլ |
| Բաժնի պետ | Ծրագրի ղեկավար |
| ՎՎԲ | ՎՎԲ |

Ծանոթացել եմ եւ տալիս եմ իմ համաձայնությունը՝

Երեւան, _____

…….

Հայաստանի Հանրապետություն, ի դեմս՝ Ֆինանսների նախարարության

Անուն՝

Պաշտոն՝

Երեւան, _____

…….

Բարձրավոլտ էլեկտրացանցեր (ԲԷՑ)

Անուն՝

Պաշտոն՝

Հավելվածներ

1ա. Պարտավորությունների պահպանումը Փոխառու կողմից

1բ. Պարտավորությունների պահպանումը Ծրագրի իրականցման գործակալության կողմից

**Հավելված 1ա**

**Պարտավորությունների պահպանումը Փոխառուի կողմից**

## 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

**Հարկադիր գործելակերպ՝** որեւէ անձի կամ անձի գույքին վնաս հասցնելը կամ այն փչացնելը կամ վնաս հասցնելու կամ փչացնելու ուղղակի կամ անուղղակի սպառնալիքներ հնչեցնելը՝ անձի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու նպատակով:

**Դավադիր գործելակերպ՝** երկու կամ ավելի անձանց միջեւ պայմանավորվածություն՝ անպատեհ նպատակին հասնելու, այդ թվում՝ մեկ այլ անձի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու նպատակով:

**Կոռուպցիոն գործելակերպ՝** որեւէ անձի կամ որեւէ անձի կողմից ցանկացած անօրինական վճարում կամ ցանկացած բնույթի ոչ իրավաչափ առավելություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն խոստանալը, առաջարկելը, տալը, կատարելը, պնդելը, ստանալը, ընդունելը կամ պահանջելը՝ որեւէ անձի գործողությունների վրա ազդելու կամ որեւէ անձի կողմից որեւէ գործողության կատարումը չթույլատրելու դիտավորությամբ:

**Խարդախ գործելակերպ՝** ցանկացած գործողություն կամ անգործություն, ներառյալ՝ խեղաթյուրումը, որը գիտակցաբար կամ անփութորեն մոլորության մեջ է գցում անձին, կամ որով վերջինիս մոլորության մեջ գցելու փորձ է արվում՝ ֆինանսական օգուտ ստանալու կամ պարտավորության կատարումից խուսափելու նպատակով:

**Խոչընդոտող գործելակերպ՝** i) կոռուպցիոն, խարդախ, հարկադիր կամ դավադիր գործելակերպի վերաբերյալ հայտարարությունների կապակցությամբ իրականացվող պաշտոնական քննությանն էապես խոչընդոտելու նպատակով քննության համար ապացույց հանդիսացող նյութերը միտումնավոր ոչնչացնելը, կեղծելը, փոփոխելը կամ թաքցնելը կամ քննիչներին կեղծ ցուցմունք տալը կամ

որեւէ անձի սպառնալը, հետապնդելը կամ ահաբեկելը՝ քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ նրա ունեցած տեղեկությունների բացահայտումը կամ քննության իրականացումը թույլ չտալու նպատակով, կամ ii) արարքներ, որոնք նպատակ ունեն էապես խոչընդոտել կոռուպցիոն, խարդախ, հարկադիր կամ դավադիր գործելակերպի վերաբերյալ հայտարարությունների կապակցությամբ իրականացվող պաշտոնական քննության հետ կապված՝ պայմանագրով պահանջվող տեղեկություններին ՎՎԲ-ի հասանելիության ապահովումը։

**Անձ՝** ցանկացած ֆիզիկական անձ, իրավաբանական սուբյեկտ, գործընկերություն կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն։

**Պատժելի գործելակերպ՝** ցանկացած հարկադիր, դավադիր, կոռուպցիոն, խարդախ կամ խոչընդոտող գործելակերպ (այն իմաստներով, որոնցով այս եզրույթներն արդեն իսկ սահմանվել են սույն համաձայնագրով), որը i) համարվում է անօրինական Գերմանիայի կամ այլ կիրառելի օրենսդրությամբ, եւ ii) ունի կամ ենթադրաբար կարող է ունենալ զգալի իրավական կամ վարկանիշային ազդեցություն Փոխառուի եւ ՎՎԲ-ի միջեւ կնքված սույն համաձայնագրի կամ դրա կատարման վրա։

**Պատժամիջոցներ՝** տնտեսական, ֆինանսական կամ առեւտրային պատժամիջոցների վերաբերյալ օրենքներ, կանոնակարգեր, էմբարգոներ կամ սահմանափակող միջոցառումներ, որոնք կիրառվում, սահմանվում կամ գործադրվում են Պատժամիջոցներ սահմանող մարմինների կողմից։

**Պատժամիջոցներ սահմանող մարմին՝** հետեւյալներից ցանկացածը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, Եվրոպական միություն եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն։

**Պատժամիջոցների ցանկ՝** Պատժամիջոցների ենթակա՝ հատուկ նշանակված

անձանց, խմբերի կամ սուբյեկտների ցանկացած ցանկ, որը հրապարակվում է Պատժամիջոցներ սահմանող ցանկացած մարմնի կողմից։

## 2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոխառուն՝

ա) ՎՎԲ-ին անհապաղ տրամադրում է «Ճանաչեք Ձեր հաճախորդին» կանոնի համաձայն պահանջվող բոլոր համապատասխան տեղեկությունները կամ Փոխառուի մասին համանման տեղեկություններ, որոնք կարող է պահանջել ՎՎԲ-ն,

բ) ըստ պահանջի ՎՎԲ-ին անհապաղ տրամադրում է Փոխառուի եւ դրա (ենթա)կապալառուների կամ այլ շահագրգիռ կողմերի՝ Ծրագրին առնչվող բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը, որոնք ՎՎԲ-ն պահանջում է՝ Պատժելի ցանկացած գործելակերպ, փողերի լվացում եւ (կամ) ահաբեկչության ֆինանսավորում կանխելու ուղղությամբ իր պարտավորությունները կատարելու, ինչպես նաեւ Փոխառուի հետ գործնական հարաբերությունները շարունակաբար մշտադիտարկելու համար, ինչն անհրաժեշտ է այս նպատակով,

գ) Ծրագրին առնչվող ցանկացած Պատժելի գործելակերպի, փողերի լվացման կամ (եւ) ահաբեկչության ֆինանսավորման որեւէ արարքի մասին տեղեկանալուց կամ դրա վերաբերյալ կասկածներ ունենալուց անմիջապես հետո այդ մասին անհապաղ եւ սեփական նախաձեռնությամբ տեղեկացնում է ՎՎԲ-ին,

դ) ՎՎԲ-ին տրամադրում է Ծրագրի եւ դրա հետագա ընթացքի վերաբերյալ ցանկացած եւ բոլոր տեղեկություններն ու հաշվետվությունները, որոնք ՎՎԲ-ն կարող է պահանջել սույն Հավելվածի նպատակներով, եւ

ե) հնարավորություն է տալիս ՎՎԲ-ին եւ դրա գործակալներին սույն հավելվածի նպատակներով ցանկացած ժամանակ ստուգելու Փոխառուի եւ դրա (ենթա)կապալառուների եւ այլ շահագրգիռ կողմերի՝ Ծրագրին առնչվող մյուս բոլոր փաստաթղթերը եւ այցելելու Ծրագրի հիմնական եւ դրան առնչվող բոլոր

կայանքները։

## 3. ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Գերմանիայի կամ Փոխառուի երկրի օրենսդրության համաձայն՝ Փոխառուն հավաստիացնում է, որ Ծրագրի մասով Փոխառուի անունից հանդես եկող որեւէ Անձ չի իրականացրել կամ ներգրավված չէ որեւէ Պատժելի գործելակերպի, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ։

Սույն հոդվածում սահմանված հավաստիացումը եւ երաշխիքն առաջին անգամ սահմանվել են սույն համաձայնագրի կնքմամբ։ Ենթադրվում է, որ անհրաժեշտ կլինի դրանք կրկնել Վարկի յուրաքանչյուր դուրսգրման դեպքում եւ Տոկոսագումարի յուրաքանչյուր վճարման ամսաթվին՝ յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով այդ պահին գերակայող հանգամանքները։

## 4. ԴՐԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոխառուին կամ ՎՎԲ-ին Պատժելի գործելակերպի, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման որեւէ արարք հայտնի դառնալուց կամ դրանց առնչությամբ կասկածներ ունենալուց անմիջապես հետո Փոխառուն պարտավորվում է լիովին համագործակցել ՎՎԲ-ի եւ դրա գործակալների հետ՝ որոշելու համար՝ արդյոք տեղի է ունեցել համապատասխանության հետ կապված այդպիսի դեպք։ Մասնավորապես, Փոխառուն անհապաղ եւ ողջամիտ մանրամասնությամբ արձագանքում է ՎՎԲ-ից ստացված ցանկացած ծանուցման եւ ՎՎԲ-ի պահանջով վերջինիս է տրամադրում այդ արձագանքը հիմնավորող փաստաթղթեր։

## 5. ԲԱՑԱՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոխառուն Ծրագրի առնչությամբ չի կնքում որեւէ գործարք կամ չի

ներգրավվում որեւէ այլ գործունեության մեջ, որը կարող է համարվել Պատժամիջոցների խախտում։

Հավելված 1բ

Պարտավորությունների պահպանումը Ծրագրի իրականացման գործակալության կողմից

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

**Հարկադիր գործելակերպ՝** որեւէ անձի կամ անձի գույքին վնաս հասցնելը կամ այն փչացնելը կամ վնաս հասցնելու կամ փչացնելու ուղղակի կամ անուղղակի սպառնալիքներ հնչեցնելը՝ անձի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար։

**Դավադիր գործելակերպ՝** երկու կամ ավելի անձանց միջեւ պայմանավորվածություն՝ անպատեհ նպատակին հասնելու, այդ թվում՝ մեկ այլ անձի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու նպատակով։

**Կոռուպցիոն գործելակերպ՝** որեւէ անձի կամ որեւէ անձի կողմից ցանկացած անօրինական վճարում կամ ցանկացած բնույթի ոչ իրավաչափ առավելություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն խոստանալը, առաջարկելը, տալը, կատարելը, պնդելը, ստանալը, ընդունելը կամ պահանջելը՝ որեւէ անձի գործողությունների վրա ազդելու կամ որեւէ անձի կողմից որեւէ գործողության կատարումը չթույլատրելու դիտավորությամբ։

**Իրավախախտումների առանձնացված կատեգորիաներ՝** նշվում են ՖԱԹՖ-ի հանձնարարականներում եւ համապատասխան բացատրագրում սահմանված իրավախախտումների հետեւյալ կատեգորիաները՝ կազմակերպված հանցավոր խմբում մասնակցություն եւ դրամաշորթություն, ահաբեկչություն, այդ թվում՝ ահաբեկչության ֆինանսավորում, մարդկանց թրաֆիքինգ եւ միգրանտների մաքսանենգություն, սեռական շահագործում, այդ թվում՝ երեխաների սեռական շահագործում, թմրանյութերի եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառություն, զենքի ապօրինի շրջանառություն, գողացված եւ այլ ապրանքների ապօրինի վաճառք, կոռուպցիա եւ կաշառք, խարդախություն,

դրամանենգություն, ապրանքների կեղծում եւ հեղինակային իրավունքի խախտում, բնապահպանական հանցագործություններ, սպանություն, ծանր մարմնական վնասվածք, առեւանգում, ազատությունից ապօրինի զրկում եւ պատանդ վերցնել, կողոպուտ կամ գողություն, մաքսանենգություն (այդ թվում՝ մաքսային եւ ակցիզային տուրքերի եւ հարկերի առնչությամբ), հարկային հանցագործություններ (կապված ուղղակի եւ անուղղակի հարկերի հետ), շորթում, կեղծելը, հեղինակային իրավունքները խախտելը, գաղտնի տեղեկությունների օգտագործմամբ առեւտրային գործառնություններ կատարելը եւ շուկայի մանիպուլյացիա։

**ՖԱՖԹ-ի հանձնարարականներ՝** Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱԹՖ) կողմից ժամանակ առ ժամանակ սահմանված հանձնարարականներ։ ՖԱԹՖ-ն միջկառավարական մարմին է, որի նպատակն է մշակել եւ ներդնել փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ազգային եւ միջազգային քաղաքականություններ։

**Խարդախ գործելակերպ՝** ցանկացած գործողություն կամ անգործություն, ներառյալ՝ խեղաթյուրումը, որը գիտակցաբար կամ անփութորեն մոլորության մեջ է գցում անձին, կամ որով վերջինիս մոլորության մեջ գցելու փորձ է արվում՝ ֆինանսական օգուտ ստանալու կամ պարտականության կատարումից խուսափելու նպատակով։

**Ապօրինի ծագում՝** հետեւյալ եղանակով ձեռք բերված ֆինանսական միջոցների ծագումը.

ա) Իրավախախտումների առանձնացված ցանկում նշված ցանկացած իրավախախտում,

բ) ցանկացած Կոռուպցիոն գործելակերպ,

գ) ցանկացած Խարդախ գործելակերպ, կամ

դ) փողերի լվացում։

**Խոչընդոտող գործելակերպ՝** i) կոռուպցիոն, խարդախ, հարկադիր կամ

դավադիր գործելակերպի վերաբերյալ հայտարարությունների կապակցությամբ իրականացվող պաշտոնական քննությանն էապես խոչընդոտելու նպատակով քննության համար ապացույց հանդիսացող նյութերը միտումնավոր ոչնչացնելը, կեղծելը, փոփոխելը կամ թաքցնելը կամ քննիչներին կեղծ ցուցմունք տալը կամ որեւէ անձի սպառնալը, հետապնդելը կամ ահաբեկելը՝ քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ նրա ունեցած տեղեկությունների բացահայտումը կամ քննության իրականացումը թույլ չտալու նպատակով, կամ ii) արարքներ, որոնք նպատակ ունեն էապես խոչընդոտել կոռուպցիոն, խարդախ, հարկադիր կամ դավադիր գործելակերպի վերաբերյալ հայտարարությունների պաշտոնական քննության հետ կապված՝ պայմանագրով պահանջվող տեղեկություններին ՎՎԲ-ի հասանելիության ապահովումը:

**Անձ՝** ցանկացած ֆիզիկական անձ, իրավաբանական սուբյեկտ, գործընկերություն կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն:

**Պատժելի գործելակերպ՝** ցանկացած հարկադիր, դավադիր, կոռուպցիոն, խարդախ կամ խոչընդոտող գործելակերպ (այն իմաստներով, որոնցով այս եզրույթներն արդեն իսկ սահմանվել են սույն փաստաթղթում), որը i) համարվում է անօրինական Գերմանիայի կամ այլ կիրառելի օրենսդրությամբ, եւ ii) ունի կամ ենթադրաբար կարող է ունենալ զգալի իրավական կամ վարկանիշային ազդեցություն Ծրագրի իրականացման գործակալության եւ ՎՎԲ-ի միջեւ կնքված սույն համաձայնագրի կամ դրա կատարման վրա:

**Պատժամիջոցներ՝** տնտեսական, ֆինանսական կամ առեւտրային պատժամիջոցների վերաբերյալ օրենքներ, կանոնակարգեր, էմբարգոներ կամ սահմանափակող միջոցառումներ, որոնք կիրառվում, սահմանվում կամ գործադրվում են Պատժամիջոցներ սահմանող մարմնի կողմից:

**Պատժամիջոցներ սահմանող մարմին՝** հետեւյալներից ցանկացածը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, Եվրոպական միություն եւ Գերմանիայի Դաշնային

Հանրապետություն։

**Պատժամիջոցների ցանկ՝** Պատժամիջոցների ենթակա՝ հատուկ նշանակված անձանց, խմբերի կամ սուբյեկտների ցանկացած ցանկ, որը տրամադրվում է Պատժամիջոցներ սահմանող ցանկացած մարմնի կողմից։

## 2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹԱՆ ՄԱՍՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրի իրականացման գործակալությունը՝

ա) ՎՎԲ-ին անհապաղ տրամադրում է Ծրագրի իրականացման գործակալության եւ դրա (ուղղակի եւ (կամ) անուղղակի) բաժնետերերի, դուստր ընկերությունների եւ (կամ) ցանկացած այլ փոխկապակցված անձանց (առկայության դեպքում) վերաբերյալ «Ճանաչե՛ք Ձեր հաճախորդին» կանոնի համաձայն պահանջվող բոլոր համապատասխան տեղեկությունները կամ համանման տեղեկություններ, որոնք կարող է պահանջել ՎՎԲ-ն.

բ) ըստ պահանջի՝ ՎՎԲ-ին անհապաղ տրամադրում է Փոխառուի եւ դրա (ենթա)կապալառուների կամ այլ շահագրգիռ կողմերի՝ Ծրագրին առնչվող բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը, որոնք ՎՎԲ-ն պահանջում է ցանկացած Պատժելի գործելակերպ, փողերի լվացում եւ (կամ) ահաբեկչության ֆինանսավորում կանխելու ուղղությամբ իր պարտավորությունները կատարելու, ինչպես նաեւ Ծրագրի իրականացման գործակալության հետ գործնական հարաբերությունները շարունակաբար մշտադիտարկելու համար, ինչն անհրաժեշտ է այս նպատակով.

գ) Ծրագրի իրականացման գործակալության, դրա կառավարման մարմինների կամ այլ ղեկավար մարմինների որեւէ անդամի կամ դրա որեւէ բաժնետիրոջ կողմից իրականացված ցանկացած Պատժելի գործելակերպի, փողերի լվացման եւ (կամ) ահաբեկչության ֆինանսավորման որեւէ արարքի մասին տեղեկանալուց կամ դրա վերաբերյալ կասկածներ ունենալուց անմիջապես հետո այդ մասին անհապաղ եւ սեփական նախաձեռնությամբ տեղեկացնում է

ՎՎԲ-ին.

դ) ՎՎԲ-ին տրամադրում է Ծրագրի եւ դրա հետագա ընթացքի վերաբերյալ ցանկացած եւ բոլոր տեղեկություններն ու հաշվետվությունները, որոնք ՎՎԲ-ն կարող է պահանջել սույն հավելվածի նպատակներով.

ե) հնարավորություն է տալիս ՎՎԲ-ին եւ դրա գործակալներին սույն հավելվածի նպատակներով ցանկացած ժամանակ ստուգելու Ծրագրի իրականացման գործակալության եւ դրա (ենթա)կապալառուների ու այլ շահագրգիռ կողմերի՝ Ծրագրին առնչվող բոլոր փաստաթղթերը եւ այցելելու Ծրագրի հիմնական եւ դրան առնչվող բոլոր կայանքները։

զ) ՎՎԲ-ին անհապաղ եւ իր իսկ նախաձեռնությամբ տեղեկացնում է ցանկացած դեպքի մասին, որի հետեւանքով Ծրագրի իրականացման գործակալությունը, դրա կառավարման մարմինների կամ այլ ղեկավար մարմինների որեւէ անդամ կամ դրա բաժնետերերից որեւէ մեկը համարվում են կամ դարձել են Պատժամիջոցների որեւէ ցանկում ընդգրկված հատուկ նշանակված քաղաքացի, արգելված անձ կամ սուբյեկտ։

## 3. Հավաստիացումները եւ երաշխիքները

3.1. Գերմանիայի կամ Ծրագրի իրականացման գործակալության հիմնադրման երկրի օրենսդրության համաձայն՝ Ծրագրի իրականացման գործակալությունը հավաստիացնում եւ երաշխավորում է, որ հետեւյալը համապատասխանում է իրականությանը եւ ճիշտ է.

ա) կնքելով եւ կատարելով սույն Վարկային համաձայնագիրը՝ Ծրագրի իրականացման գործակալությունը գործում է իր անունից եւ իր միջոցների հաշվին.

բ) ըստ իր ունեցած տեղեկությունների եւ միայն արժեթղթերի շուկայի կարգավորումների համաձայն Ծրագրի իրականացման գործակալությանը հայտնի բաժնետերերի առնչությամբ ո՛չ Ծրագրի

իրականացման գործակալության բաժնեմասը, ո՛չ էլ Ծրագրում ներդրված ֆինանսական միջոցները չունեն Ապօրինի ծագում,

գ) Ծրագրի իրականացման գործակալությունը, դրան փոխկապակցված անձինք, դուստր ընկերությունները կամ էլ որեւէ այլ Անձ, որը հանդես է գալիս իր կամ դրանց անունից, չեն իրականացրել կամ ներգրավված չեն եղել որեւէ Պատժելի գործելակերպի, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ.

դ) Ծրագրի իրականացման գործակալությունը i) չի հաստատել որեւէ գործնական հարաբերություն Պատժամիջոցների որեւէ ցանկում ընդգրկված՝ հատուկ նշանակված քաղաքացիների, արգելված անձանց կամ սուբյեկտների հետ, կամ ii) չի ներգրավվել որեւէ այլ գործունեության մեջ, որը կարող է համարվել Պատժամիջոցների խախտում։

3.2. Սույն հոդվածում սահմանված հավաստիացումները եւ երաշխիքներն առաջին անգամ սահմանվել են սույն համաձայնագրի կնքմամբ։ Ենթադրվում է, որ անհրաժեշտ կլինի դրանք կրկնել Վարկի յուրաքանչյուր դուրսգրման դեպքում եւ Տոկոսագումարի յուրաքանչյուր վճարման ամսաթվին՝ յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով այդ պահին գերակայող հանգամանքները։

## 4. ԴՐԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրի իրականացման գործակալությունը պարտավոր է՝

ա) լիովին համապատասխանել ՖԱԹՖ-ի հանձնարարականներին համապատասխան սահմանված՝ փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի չափանիշներին եւ իրականացնել, պահպանել, իսկ անհրաժեշտության դեպքում լրամշակել դրա համապատասխան ներքին չափանիշներն ու ուղեցույցները (ի թիվս այլնի, հաճախորդների պատշաճ ուսումնասիրության առնչությամբ)՝ Պատժելի գործելակերպի, փողերի լվացման

կամ ահաբեկչության ֆինանսավորման որեւէ դեպքից խուսափելու համար. եւ

բ) Ծրագրի իրականացման գործակալությանը կամ ՎՎԲ-ին Պատժելի գործելակերպի, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման որեւէ դեպք հայտնի դառնալուց կամ դրանց առնչությամբ կասկածներ ի հայտ գալուց անմիջապես հետո պարտավոր է լիովին համագործակցել ՎՎԲ-ի եւ դրա գործակալների հետ՝ որոշելու համար՝ արդյոք տեղի է ունեցել համապատասխանության հետ կապված այդպիսի դեպք: Մասնավորապես, Ծրագրի իրականացման գործակալությունն անհապաղ եւ ողջամիտ մանրամասնությամբ արձագանքում է ՎՎԲ-ից ստացված ցանկացած ծանուցման եւ ՎՎԲ-ի պահանջով ներկայացնում է այդ արձագանքը հիմնավորող փաստաթղթեր:

## 5. ԲԱՑԱՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրի իրականացման գործակալությունը պարտավոր է՝

ա) ապահովել, որ իր բաժնեմասը եւ իր կողմից ներդրված այլ ֆինանսական միջոցներ չունենան Ապօրինի ծագում.

բ) ապահովել, որ իր գործունեությունը Պատժելի գործելակերպի, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հիմք չհանդիսանա. եւ

գ) չհաստատել կամ չշարունակել որեւէ գործնական հարաբերություն հատուկ նշանակված անձանց, Պատժամիջոցների ցանկում ընդգրկված՝ արգելված անձանց կամ սուբյեկտների հետ եւ չներգրավվել որեւէ այլ գործունեության մեջ, որը կարող է համարվել Պատժամիջոցների խախտում:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2020թ. հուլիսի 1-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց II - Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի մասհանումների ժամկետի երկարաձգում և հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**